

Ա Ր Ե Ի Մ Ո Ի Տ Ք

ԱՐՁԱԳԱՆԳ ԵՐԲՈՂԱՅԻ ԼՈՒՍԱԻՈՐՈՒՄԵԱՆ.

Ա. Տարի. ԽԻ. 13 Հասարակական Եկույն, ամբողջ, տարեկան ծախս է: Դրանով, — Բաշի, Եղայ Քանդակ, 21, Եղայ Քանդակ, 1959 Մայիս 13.
— Պոլիս, Իզմիր, Եղայ Եկիստեան. — Եղայսա, Եղայ Տեր Դաւթաբեկ Եղայսա:

ԲԱՆԱԿ ԻԳԱՆԱՅԻ

Պարտանգրիտ, 21 մայիս.

Պարտան առ կայսրունին.

Աւտորիական զորքը, զրկեմ 13,000 հոգի, յար-
ձակեցաւ Պարտակէ տ' Ելլէ մարեշային զորքերու վրայ:
Փօրէ զորապետին բաժինը սատակի կոխէ ետե
տիրեց, զարմանալի ըսչումեանի վարտելով, Մօն-
Քէյէլլէ գիւղին՝ որ արդէն այնքան տնտեսն է:

Սարախնեան ձիաւոր զորքը, որու կը հրամայէր
զորատիրո Սօննազ, հազարազրկու ազդուութիւն ցոյց
տուաւ: Արեւը հարիւր հոգի ձերքածով ըրինք՝
որոնցմէ մէկը հազարատիրո:

Մեր կողմէ հինգ հարիւր զինուորք ինկան մեռած
կամ վիրասուր:

Այս դարձը մեծ սրտով կ'ընէ Փօրէ զորապետին
որ արկուծեան չափ խելը լսանեցուց:

Երեկ երեկունէ ի վեր Աւտորիական բանակը ետ
կը քաշուի:

ՆԱԲՈՒԼՈՒՆ.

Մանրեօրը այս յաջողութեամբ կը յիշէ և կը յաճուի:
Պէտքէ զօրապետը, ճիշէ հրամանատարը մահ զոտն
պատեկապիս ցոյցովն վրայ: Երեք հազարապետ հը-
կու հրամանատար վիրասուր ինկան:

Քշտակին կորուստը Երկու հազարի կը հասնի:

Վ. Կայսրը այցելութիւն ըրեր է Վ. Եկերաի հիւան-
դարանին որ Դրամիտեան և Աւտորիական վիրասուր հա-
ւատար գործունէ կը զանեն:

Փօրէ զորապետին գրած ծանոթութեանէ կը տեսնուի

որ իր բաժինին կորուստը վեցէն մինչեւ եւս հարիւր
զինուորքի կը հասնի, և ոչ հինգ հարիւրի, ինչպէս
Վ. Կայսրը կը զրէ: Սարախնեան ձիաւոր զորքն ոչ
բուգմանի կորուստ ըրեր է, որու մէջ կը գտնուին
չառն պաշտօնաւորք և պերախա Վօրեկի հաղարկեալ:

23 մայիս 1859, Լիւթիքնա.

Բնակիչք Թօսթանայի,

Պարտան, ձեր երեսփոխաններու խնդիրին համե-
մատ, կ'ազարկէ գիտ ձեր երկիրը որ զամ պատերազ-
միւն Քշտակներու, Եղայսայի բռնաւորներու դէմ:

Իմ այս պաշտօնը լոկ ուղղմանն է. չեմ ուզեր
զբաղիլ և չախտի զբաղիմ ձեր բնական մատակա-
րարութեան:

Պարտանի Վ. յայտնի ըսաւ թէ մէկ փառասիրտ-
Յիւն միտին ունի, այն է ժողովուրդի մը ազատու-
թեան սուրբ իրաւունքը յաղթանակել տալ, և երբեք
զեղբատանի շանկը չպիտի գրգռեն իր որոշումը:

Բնաւ նաեւ թէ՛ Պրանսա, իր զորութիւնէն լուրջ-
գին գոն, միտակ մէկ նորատակ ունի և կ'օգէ իր
հային մօտ բարեկամ ազգ մը ունենալ որ իրեն պար-
տաւորի իր վերածնունդին:

Եւմէ տէր զմեզ պաշտպանէ և յաղթութիւն տայ,
Եղայսա սիտի վերականգնուի ազատաբէն և այսու-
հետեւ ազգերու կարգը անցնելով Եղայսայի կշիռը
անշարժ պիտի սրան:

Ձեր միտքը բերէ՛ր, որ չկայ կարի՛ մեծ գոնք

երբ ազգային անկախութիւնը պիտի ըլի վարձք ձեր ջանքերուն, և ցոյց տուէ՛ք աշխարհի ձեր միութեամբ, զգաստութեամբ՝ որ արժանի էր ազատ ըլելու :

Իշխան հրամանակաւ Ե գոռահարակի
Իդալիայի բանակին.

ՆԱԲՕԼԷՕՆ (ՃԵՐՈՄ.)

Համարարք,

Նոր կեանքի մը ասպարէզ կը կոչուիք և կը պարտաւորիք այս կոչումին պատասխանել ինչպէս ձեր նախնիք ըրին ի Բօնախտաւ և ի Լեկնասօ : Թշնամին մի և նոյն է, միշտ դժնեայ, արիւնարբու, անողորմ, աւարաբու : Ամեն զաւառներու ձեր եղբարքը երդում ըրին յաղծել կամ մեռնիլ ձեզի հետ : Մեր պարտն է քսան սերունդներու եղած ոտնահարութեան, նախատինքին, ստրկութեան վրէժը խնդրել : Մեր պարքուն է այսօր թողուլ մեր զաւակներու ժառանգութիւն մը՝ բոլորովին անբիծ օտար զինուորին լուծէն :

Վիկտոր-Էմմանուէլ, զոր ազգային կամքը ընտրեց զերագոյն պետ մեզի, իսկ ուղարկէ ձեր մէջ հայրենասիրութեան ճակատներ կազմելու համար : Սրտագին զոհ եմ որ այս սուրբ պաշտօնը ինձի յանձնուեցաւ և պարծանք կը համարիմ ձեզ հրամայելու թշնամիին դէմ :

Ձէնք առէ՛ք ուրեմն : Ստրկութիւնը պիտի դադրի. ով որ զէնք մը կրնայ առնուլ և չառնուր, ով որ կրնայ շարժիլ և երևան չ'եղնէր, մասնիչ է :

Իդալիա, իր միասիրտ և միամիտ զաւակներով, Իդալիա օտարին լուծէն ազատ քաջերով, Իդալիա պիտի զիտնայ նորէն ելնել այն աստիճանը՝ զոր նախնիսնամութիւնը իրեն սանձանք է ազգերու մէջ :

ԿԱՐԻՊԱԼՏԻ

(Զօրապետ Աղլեան որսորդներու.)

Սարտէնիայի Թագաւորը. հետագայ պատուէրը
Կուղարկէ առ Թօսթանա :

Զինուորք Թօսթանայի,

Երբ ազգային պատերազմի շշուքը լսեցիք՝ զօրապետ մը կը խնդրէիք որ տանի զձեզ Իդալիայի թշնամիներու դէմ : Յանձն առի հրամանատարութիւնը, վասն զի պարտքս է ազգային բոլոր զօրութիւնները կարգի դնել և միութեամբ կապել :

Դուք այստեղեւ Իդալիայի զաւառի մը զինուորիչէք. Իդալեան բանակին մասն կը սեպուիք :

Ձձեզ արժանի կը համարիմ մարտակից ըլլելու Ֆրանսայի առիւծասիրտ զինուորներուն, անոր համար կը դասեմ զձեզ ամենասիրելի փեսայիս, Իշխան Նաբօլէօնի, հրամանին ներքեւ որուն Ֆրանսայի կայսրը ռազմական հարկաւոր գործեր յանձնեց : Անոր հնազանդ եղիք ինչպէս ինձի : Համաժող համասիրտ է անիկա մեզ. սիրտին մէջ այն սէրը, այն համակրութիւնը ունի՝ զոր ես և Կայսրը կը կրենք ի միասին, վեհանձն Կայսրը որ Իդալիա եկաւ արդարութեան վրէժը ունեւոր և ազգային իրաւունքը յաղթանակել տալու համար :

Զինուորք մեծ փորձերու օրերը հասան : Ձեզ կ'ապաւինիմ :

Պարտաւորութիւն ունիք Իդալեան դրօշին պատիւը պահելու, պարտաւորութիւն ունիք աւելցնելու զայն :

ՎԻԿՏՕՐ-ԷՄՄԱՆՈՒԷԼ

ՀԻՒՍԻՍԱՓԱՅԼ

(Շարունակութիւն Տես թիւ 11, էջ 82.)

Հասարակութիւնը միաբան հաւանութեամբ ընտրեց իւր միջից որպէս վիպեալ արժանաւոր մարդիկ Պ. Կարապետ Մարգարեան Հայրապետեանցը, Պ. Գրիգոր Կարապետեան Սալտիկեանցը, Պ. Պետրոս Դանիէլեան Սախաւեանցը, Պ. Յակոբ Ստեփաննոսեան Հալլաճեանցը և Պ. Յովհան Դոզրեալեանցը : Այս սրարոնները Նախիջեւանի Մա-

ՆՅՈՒՆՆԵՐԻ մէջ կայ մի տառ ևս սուտ, թող ապա հանդէս գան մեր հակառակորդը և ապացուցանեն մեր ասածի ճշդ գէմը. բայց մենք ունինք մեր վկայքը: Յանկացողքը կարող են այս մասին լիակատար ծանօթութիւն ստանալ նախասացեալ ժողովի անդամներէր, Աստրախանի թեմակալ արքեպիսկոպոսից և Էջմիածնի սրբազնագոյն Սինոդոսից: Դուքէ մեր ասածները մի ժամանակով հաստատվին և եկատերինօսուլի Քաղաքական Պալատի և Կառավարող Ծերակուտի ուժերորդ բաժնի ձեռքով:

ՆՅՈՒՆՆԵՐԻ մէջ կարգույն այս գործի արտաքին ձեւաւորութիւնը, թող և Հիւսիսային մէջ տեսնէ նորոն ներքին կազմակերպութիւնը: ՆՅՈՒՆՆԵՐԻ կարողացաւ երկու անգամ նիւթ լինել լրագրի, թող և վերջինս միանգամ օրագրի նիւթ դառնայ, որպէս զի աղղը մոլորութեան մէջ չմնայ այս մասին, այլ կարգաւորվէ ևս այս, մաքուր խղճամտանքով և լուսատու բանականութեամբ դատաստան կատարէ:

Շատ բաներ ունենք զիւ ևս գրելու, բայց հաւատացէք, մեծապատիւ հրատարակող, որ սիրտ չկայ մեր վրայ. որ մինը զրէս, որ մինը ողբաս կամ որ մինը արտասուեն: Ամենակալ Տէրը թող բանայ մեր աղղի աչքը, որ զա կարողանայ վերջապէս ճանաչել իր օգուտը և վնասը և խաղալիկ չդառնայ ամէն մի մարդու ձեռքում:

Երեւի թէ Նախախնամութիւնը մի այսպիսի անմխիթար դրութիւն էր պատրաստել մեր համար, որ ամենայն օր մորմորվէին և կսկծէին մեր աղղի պակասութեան երկ վրայ, բայց մինչև էրբ, ինչքան երկար, մինչև էրբ այսպէս. անվերջ մտածութիւն.....:

Աւելորդ ենք համարում մէջ բերել այս տեղ Մեղուի հրատարակողի խօսքերը և կարծիքները, որ տպած էին Մեղուի 59 համարի մէջ. պատճառ՝ շատ անկշիւ և ստորին բաներ են նորա, ուրեմն և անարժան. ամենեւին խօսակցութեան նիւթ դառնալու:

Խնդրեմ ևս այն,

Մ. ՆԱԼԲԱՆԳԵԱՆՅԱՆ:

ՊԱՏՆԵՐԱԶՄԻ ԼՈՒՐՆԵՐ.

Մօնօթեպէլլօի կոնիւն ևտե, ուր Ֆրանսայի դրօշակը կէս դարի մէջ երկու անգամ յաղթութեամբ պսակուեցաւ, մինչև մայիսի 29 յիշելու արժանի բան մը չկայ: Աստրախայի օրագրիք և զօրապետք սուտ սուտի վրայ կը դիպեն իրենց յաղթութիւնը սքողելու համար. բայց ի դուր: Յաղթողը կ'երևի, չ'ընկրկիր և քայլ առ քայլ փախուտ չ'անգրէր դէպ ի Լօմպարտիս:

Մայիսի 50ի վ. Վիկտոր-Էմմանուէլ թագաւորը կը յարձակի Բալեանթրօի վրայ, որպէս զի Մէլլիա գետին մէջ կամուրջ մը նետէ և զիւրութիւն տայ իր բանակին միւս եղրը անցնելու: Առջի օրը Աստրեան բանակը մեծ ընդդիմութիւն չ'ըներ, բայց 51ին 25,000 զօրքով ևտ կը դառնայ և ուժգնակի կը դիմէ որ Բալեանթրօն նորէն առնու: Վ. Վիկտոր-Էմմանուէլ, Զիւսիսային զօրապետին բաժինով, կ'սկսի կռուիլ և բռնած զիրքը պահէ: Երկու կողմէն քաջութեամբ կը զարնուին, բայց շատ չ'երթար թշնամին կզգայ Զուսիլներուն սոսկալի հարուածը, և յոգնած զերի ու ուղղամթեր թողլով կը դառնայ իր բանակատեղին: Սարտենիայի թագաւորին անվեհեր քաջութիւնը և Զուսիլներու ըրածը կարգէ դուրս դէպքեր կրնան սեպուիլ և պատմութեան արժանի են: Զուսիլներուն Գ զունդը տեսնելով որ մէկէն մէկ թշնամին աւաճեցաւ առջև կ'երևնէ և անհնարին է հրացան մը պարպել, վասն զի վառօղը գետնէն անցնելու տունն ծրջուէր էր, կայծակի պէս ուժեղացաւ գունդին վրայ կ'իջնէ, և կ'սկսի սուխով հնձնէ դայն: Վայրկեանի մը մէջ վեց թնդանօթ կ'առնու և հրելով քշելով հինգ հարիւր թշնամի զինուոր գետին մէջ կը զլորէ: Վ. Վիկտոր-Էմմանուէլ թագաւորին զօրքերը 1000 կալանաւոր կ'ընեն և երեք թնդանօթ կ'առնուն: Աստրեան բանակին կորուստը, բաղդատելով դաշնադիրներու կորուստին հետ, շատ մեծ է, կ'ըսեն:

Այս պարտութիւնը Փիլիպին անքան սրամտութիւն կուտայ, որ նոյն օրը ժամը վեցին նորէն Բալեանթրօյի վրայ յարձակելու կը հրամայէ: Իր զունդերը վերստին մեծ հարուած կ'ընդունին և կը հետանան պատերազմի դաշտէն, այս անգամ անգառնալի կերպով...: Թրօշլու զօրապետին բաժինը, Իզալիայի բանակէն, Վիկտոր Էմմանուէլին ձեռնտու է, և Վայսեր հրամանին համեմատ Էթէ հարկաւորութիւն մը տեսնէ միջամալս պիտի ըլլի Բալեանթրօն պահելու համար:

Բալեանթրօի կռիւը Սարալինեան բանակին մեծ պատիւ կ'ընէ և նոր փառք մը կուտայ իր անվեհեր թագաւորին և հայրենատէր աղղին: Բալեանթրօն Սարալինայի Մօնօթեպէլլօն կրնայ սեպուիլ: Այս յաղթութիւնէ ևտե զօրապետ Նիլէլը Նօվար կը մտնէ: Նօվար Միլանէն շատ հեռու չէ: Հասարակութիւնը կ'ուզէ որ քանի մը օրէն Միլանի վրայ ծիլի Ֆրանսայի և Իզալիայի դրօշը: Դուքէ այս տողերը գրելու ժամանակ հասարակութեան կամքը կը կատարուի: Զուսիլները շարժիլ սկստան, արգելքները կ'անհետան...: Ազատութեան շունչը լեռները անգամ կը խոնարհէ և բռնութեան ձեռքով շինուած բերդերը անգրգոտելի չեն կրնար մնալ անոր դէմ: « Անցին Զուսիլք և անա սչ էին »:

Ահա Վիկտոր-Էմմանուէլ զիւցաղն թագաւորին օրական պատուէրը Բալեանթրօի կռիւէն ևտե:

Քրիմէի պատերազմին ժամանակ եղած փոխը կամ ծախքը հօծ միլիարէն անկի է որուն երկու միլիարը Ֆրանսան և երկու միլիար հինգ հարիւր միլիոնը Անգլիան ըրին : Այսպէս հինգ տարիի մէջ մարտիկ և չէզոք տէրութիւնները ստիպուեցան տաս միլիար ֆրանք վատնել... Թիւրքիայի անկախութեան և Իզմիրի ազատութեան համար, թող փոքր ազգի մը չափ մարդերու զոհը... : Այս կը կատարուի տաս և յններորդ դարու մէջ... :

— Իւնիոկր օրագիրը Երուսաղէմէ գրուած երկար նամակ մը կը հրատարակէ որու մէջ զայնակղէլի պարագաներով կը նկարագրուի Յոյներուն Հայերու հետ ըրած կռիւը : Այս տեսակ կռիւներու պատմութիւնը գրեթէ ամէն տարի կը յիշուի և քրիստոնէութեան նախատինք կըսեալով : Իրարու զոյլս ճեղքել, թև կոտրել, արիւն թափել Քրիստոսի տաճարին մէջ և գերեզմանին ըով, ուխտաւորներու բարբարոսութեան նշան են քան թէ հաւատքի : Շատ իրաւունք ունի եղեր այն ճեղինակը որ կ'ըսէ. « Եթէ Թիւրքերը չըլլին քրիստոնէ ազգերը իրարու միտ կ'առնէ : » Իւնիոկր կը յաւելու. Ոստիկանին ներկայութիւնը և քանի մը փայտաւորներու հարուածը ամէն քան խաղաղուցին : Մահմետականին ստուերը Քրիստոսի խորանին վրայ... Ընչ փառք քրիստոնէութեան համար : Ա'երևի թէ Յոյն և Հայ խաղաղի մը փայտէն աւելի կը վախճան քան թէ Քրիստոսի ներկայութիւնէն : Ի՞նչ հաւատք :

— Ռուսերը, 1812ին, ամէն քան կրակի կոտորակն Նաբոլէօնի արշաւանքը արգիլելու համար Բիէմօնի գնդերը պսօր ջուրը զորք կ'ածէն Աւստրիայի արշաւանքին դէմ և ամէն կողմի ծումբերը կ'արեն որ դաշտերը մօր զառնան : Երկինքը ալ տեղտարափ կը հոսէ և կարծես թէ իր նպաստը կ'առաքէ փոքր այլ քաջ ազգի մը բանակին : Աւստրիայի զօրապետը բազի կամ սազի պէս քանի մը օր պղծուելէ ետև, ստիպուեցաւ Լօմպարտիա մասնէլ զոդութիւններով, յափշտակութիւնով և բարբարոսութեան ամէն սոսկալի նշաններով պսակուած :

Յերկունս զոյլով լեռոն ահագին
Եւ ձայն բարձեալ գոչէր ուժգին.
Աշխարհ համայն կայր իղնին
Եւ նա ծնաւ... զմուկ չընչին :

Աւստրիայի բանակը թնդանօթի ձայնը չ'առած հեղնութեան սրինգի ներքն կ'լցնայ... :

— Իզմիրի փոտրաճղի դաւանները, աշխարհիս չորս կողմէն, կը փութան հայրենիք դառնալ և անկախութեան համար աքսոր կրելէ ետև, արիւն թափելու կերթան : Արդէն Պօլիսը, Իզմիրը և ուրիշ ծովեզրեայ քաղաքներէ եկողները բաղմամբ են : Օրագիր մը կը հրատարակէ թէ մէկ շոգեհատով Եգիպտոսէն երէք հա-

րիւր կամաւոր մեկներ են, և դէպ ի Մարսիլիա կ'ուղևորուին Պ. Ֆ. աը Լէսէշան յորգորով :

— Պօմպէի լրագիրները Թանսիա Թօբէանոնէրէնի ապստամբին բռնութիւնը և մահը ազգ կ'առնեն : Թանսիա Թօբէ մասնաւորապէս Անգլիայի զինուորներու ձեռք ինկեր է և ուղղմական օրէնքով զատուելով՝ անյատաղ կախուեր է : Այս պարագլուխը, ինչպէս նաև յետին ապստամբը, մեծ արիւնքամար մեռեր է, զատաւորներէն ոչ շնորհ և ոչ զթաւրին խնդրելով : Թանսիա Թօբէն ետքը կարգը Նանա Սահեպին պիտի զայ և անկէ ալ ետքը միւս ապստամբներուն, մինչև որ Անգլիայի թինառու բարբարոսութիւնը յազի և յափրի... :

— Նոյն լրագիրները Ի՛նչ փոխարքային վախճանիլը կը հրատարակեն : Շատերու յայտնի է թէ՛ Ի՛նչ Ալիա-տանի Քանթօն նահանգին կ'իշխէր էրը Ֆրանսայի և Անգլիայի դաշնադիր բանակը Քանթօն քաղաքը մտաւ, զինքը ձերբակալ ըրաւ ու Կալկաթա զրկեց որ հոն նաւի սպասէ հաշտութեան օրը : Ի՛նչ կենդանի պատկեր մ'էր ստիպական երկդիմի և ստորին բարբի :

— Պաշտօնական օրագիրը կը հրատարակէ Պ. Էմբալին հիւպատոս անուանիլը ի Վիկո. Պ. Էմբալն այն զիւցաղն էրիտասարդն է որ ձեռտէի սպանդին օրը այնքան արիւնքին ցոյց տուաւ իր տէրութեան զօրօշակ և օրիորդ Էվիլեարին պատիւը խաժամութ և արիւնարբու ամբոխի մը ձեռքէն ազատելով : Այսպէս կը կատարուի իրեն մեղի ըսած մոտեմական խօսքը. « Եթէ օրիորդ Էվիլեարը կին առնու, մէյ մ'ալ Եւրոպայէն զուրս պաշտօն չ'եմ ընդունիր, վասն զի կինս տաճկի երես տեսնել չ'ուզէր այստե՛տես : » Պ. Էմբալն լաւ արպերէն՝ պարսկերէն և թիւրքերէն զիտէ և Ասիայի ժողովուրդներու վրայ խորին տեղեկութիւն ունի : Չենք կարծեր որ նոր պաշտօնին մէջ իր երկարամեայ վաստակը և լեզուագիտութիւնը շատ օգտակար ըլլան իրեն և իր տէրութեան : Մենք որ պատիւ ունեցանք օր մը իրեն հետ անցնել և մեր վազեմի բարեկամութիւնը նորոգել՝ կը հաստատենք թէ Ասիայի Ֆրանսեան դեսպանատունը հազուադիւս պաշտօնաւոր մը կը կորուսընէ այս պարագայի մէջ :

Ս. Ո.

— Անգլիայի Բարլամէնդին ընտրութիւնը կատարուեր է, բայց թօրի կողմը արդէն պարտուած կը սեպուի նաև քուէին առջև, վասն զի 536 աղատական ընտրուեր են և 298 պաշտօնականը (ministeriel) : Աւելի կը հետևի որ արդի դանլինը երկար և հանգիստ օրեր չ'ալիտի կրնայ անցնել բարլամէնդին մէջ : Լօր Բարլամբո-ժօնի ճառը, զոր իր ընտրութիւնէ ետք ըսաւ, շատ նշանակելի է և անհնարին է աւելի ճշգնալի ու կծու կերպով իր հակառակորդները ծաղրել, վրեժ առնուլ և իր քաղաքաւորութիւնը փառաւորել : Պ. Բարլամբոժօն մէկ քան կը մոռնայ ըսելու... իր ընկիւղը :

Հայկական քաջութիւն մը, կարգէ դուրս անվախութիւն մը, հրաբուխ սողափայտութիւն մը և ռազմագիտական անգիւտ սղի մը անհա Վարկապաւտին յատկութիւնները : Քանի հոգի կայ Ներսիսայի մէջ որ դանոնք ունենայ և գործածէ... Վարկապաւտին և իր զիւցաղնի զունդը Իգալեանի անունը կը փառաւորեն և յիշել կուտան, որ մեռած չ'է քաջութիւնը անոնց սիրտին մէջ :

Che l'antico valore

Negli Italici cor non è ancor morto

Արշարոյս Արարատեանը՝ Պոլիս տպուած Մասիս անուն « խայտառակ » թերթին վրայ ծանօթութիւն մը կը գրէ և կը յաւելու. « Իսկ իմասին Իգմիրի բաժանորդաց խորոյ, կը պատասխանենք թէ իւր լրագրոյն « արժանաւորութիւնը չկարծէ (հրատարակիչը), այլ « ծոց շնորհապարտ դուանի զինքը իւր բարերար « ամիրային թէ քաղբիս և թէ Կոստանդնուպոլսոյ « բաժանորդաց համար և զգուշանայ որ նոյն ամիրային « պաշտպանութիւնը բոլորովին չկորուսէ « իւր անարժան ընծացքով : »

Շատ ազգայիններու հարցոյցինք, թէ ո՞վ է այն ամիրան որ Մասիս անուն « խայտառակ թերթը » կը պաշտպանէ, և ամէն կողմէն միաբերան Պարոն Պ. Խորասանեանին անունը լսելի եղաւ մեր բոլոր տիւրերը... Մենք գիտէինք արդէն, որ այդ « խայտառակ թերթը » գործի մ'է ստորին մարդերու, բայց չ'էինք ուզեր այս ետքիններու մէջ հաշուել Պ. Խորասանեանը, վասն զի մասնաւոր նամակով երբեմն իր զղջումը յայտնէր էր մեզի « խայտառակութիւն » մը պաշտպանելուն համար... :

Կ'երեւի թէ, մինչև այսօր, Պ. Խորասանեանը փառք կը սեպէ իրեն պաշտպանել... « խայտառակութիւնը... » Կը նշանակենք զայս և կ'անցնինք անդին : Խօսքը ոչ միայն ըսել տուողին այլ և ըսողին արժէքը ունի, և Մասիս անուն « խայտառակ թերթին » մեզի զէմ գրած նախաւորները, նաև Խորասանեան Մամիսայի մը պաշտպանութեան տակը, պատասխանի արժանի չ'է : Այս նախաւորները հիմա նոր նշանակութիւն մը կրնայ ընդունիլ և շատ բաներ մեկնել... բայց էր և կը մնայ մեր արհամարհութեան ներքեւ :

A bon entendeur salut!

Ա. Ո.

Հետագայ ստանաւորը յանդարտապէս շինուեր է Շանդ-Լիլիլի կողմերը... օրիորդի մը վրայ : *Honnai sont qui mal y pense.*

ԱՄՍՁՈՆԻ ԵՐԳ.

Երկու ստին ունիմ թէպէտ ամաղօն
Իմ սուղն է արդ սիրոյ հօրիզօն.

Հոն կ'ուղեմ փայլիլ թեւով և զէմքով
Եւ Սիրոյ տուած ինձի շնորհքով :
Թէ մարդ է յանդուգ՝ Ես չեմ անարի
Եւ զէմ դնելու վարժ ու զատ տալի :

Երկվար նստիլ և արշաւաւոր
Մարդու վրայ զինել և տալ մի համբոյր
Իր սիրաւ գերի ընել և տանել
Ի ռազմատեղի կամ ի բանտ անել
Ինձ շատ զիրին է : Ասպարէզ ծոց գայ
Ով որ իր վրայ առնութիւն կըզայ :

Ինձի զիմաղիր՝ մէկ նաև երկու
Նս ընտրել եմ միշտ շահատակ հովիտ :
Իմ երկու ստինք իրբէ բերդ ամուր
(Երբ թշնամին է խիստ և պառամուր)
Կուրծքս լաւ պահէր ես և պահպանէր.
Հանդիսական մի զիս չէ այսպանէր :

Վախ ինձի զիշեր չտար և ոչ տիւ,
Ամէն ժամ պատրաստ եմ ես ի կիւր :
Ի պատնէշ ծագուն, ի դաշտ և ի փոս
Թշնամին կ'ընեմ ես միշտ դարահոս :
Ամէն տեղ յաղծող եմ փառաւորուած.
Ամաղօնին հետ է միշտ տէր աստուած :

Մարտիկ քառ զիտէ, տռեան է վկայ
Ձի ուր ես դարկի դեռ սպի մի կայ :
Պէլլօնին ժպիտ եւ ազգու յորդոր
Վկայ ես ինձի : Վկայ է Հէկդոր
Են վկայ նաև անցորդ յոգնածիւ
Թէ ես ազուն է կենեմ միշտ բազդիւ :

Կ'ըսէ ամաղօն այս սիրուն և սէգ :
Եւ ձի կը հեծնէ և կ'առնու մի տէգ,
Եւ արշաւակի Պոլսոյն յանտառ.
Կը հառնի. իր զէմ է յոյժ սիրաւառ :
Քեզ Լընէկ մարտիկ որ կիյնիս յորսայս
Քնքուշ ձեռքին տակ ամաղօնին այս :

Համարաւոր ՏԵՂԵՂ.

Ի ԲԱՐԻՉ, ԱՐԱՄԵԱՆ ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ.

Paris.— Typographie Arménienne Walder, rue Bonaparte 44.